ՀԱՍՑԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHÈNES (Grèce)

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւնք եւ չեն զրկուիր։ Յօդուածներու պատշաճ դատուածները միայն կը հրատարակուին։

Բաժնեգնի կամ ծանուցման վճարէն ամէն երկրի նամակադրչները (փուլ.) կ'ընդունուին հարիւրին 20 պակաս հաշուելով։

Ծանուցումներ կ'ընդունուին դիւրամատչելի գիներով։

ЕФНМЕРІС Н ЕНѲСІС

ՄԻՈՒԹԻՒՆ

(ՕՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ)

ԲԱԺՆԵԳԻՆ

Տարեկան արծաթ ֆրանք 4
Վեցամսեան » » 2
Հայաշատ քաղաքներու մէջ ձեռքէ կը ծախուի հատը 10 սանթիմ։
Փոսթի ծախքը խմբագրութեան կը պատկանի։
Բաժնեգինները կանխիկ վճարելի են։
Թերթ ուզողներու բաժնեգինը չը պարունակող նամակները նկատի չեն առնուիր։
«Միութիւն»ը և ոչ մի տեղ ձրի չը զրկուիր։

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ ԿԻՍԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Գ. ՏԱՐԻ ԱԹԷՆՔ 15|27 ՄԱՐՏ 1899 Թիւ 28

ԿՈՉՈՒՄ

ԱՌ ՀԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մեր անցեալ թուով ծանուցինք Վիեննայի այն հեռագիրը, որ Վանայ նահանգին մէջ բնակող հայերու աղեկտուր վիճակը կը նկարագրէր։ Այդ առթիւ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը՝ վերջերս շրջաբերական մը հրատարակելով, կոչում կընէ ընդհ. հայ հասարակութեան՝ որ շուտափոյթ օգնութիւն հասցնեն իրենց սովատանջ եղբայրներու։ Շրջաբերականը՝ որ սրտաճմլիկ եղելութիւններ կը պարունակէ, անշուշտ արտասահմանի ամէն հայաբնակ երկիրներու մէջ տարածուած կը լինի. եթե ոչ, տեսնել բնագրի պատճէնն «Արմէնիա» լրագրոյ 59 թուոյն մէջ։

Վանէն Պատրիարքարան հասած իրողութիւն մը անհաւատալի է. օրական տասնեակ հայեր սովամահ կըլլան. ո՛չ ուտելու հաց, ո՛չ վառելու փայտ և ոչ ալ հագնելու գգեստ ունին։ Ցուսահատութիւնը կատարեալ տիրած է ամէն կողմ, այնպէս որ հարկադրուած են անբնական ուտեստներով սնանիլ, և այն ալ չի գտնելով խեղճ արարածները ցուրտէն և անօթութենէն կը մեռնին։

Առ այս յանուն ազգութեան, յանուն մարդասիրութեան ԿՈՉՈՒՄ կընենք ամէն զգայուն հայերու, ո՛ւր որ ալ կը բնակին ինչ դրութեան մէջ ալ որ կը գտնուին, ըլլան հարուստ՝ ըլլան աղքատ՝ կուսակցական կամ ոչ-կուսակցական մի կող թողլով անհատական ու կուսակցական կռիւներն ու սին վէճերը, իրենց գտնուած երկիրներու մէջ պարտաւորիչ հանգանակութեան ձեռնարկեն դիմելով թէ՛ հարուստին և թէ՛ աղքատին։ Ամենայնիւ աղքատը իւր անօթի և մերկ եղբայրներու սիրոյն համար ամբողջ օր մը թող ծոմ պահէ, և այդ աւուր ուտելիքը անոնց յատկացնէ։

Այն որ հայ է պարտի մասնակցիլ սոյն հանգանակութեան առանց պատճառաբանութեան։ Աթէնքի և Պիրէօնի հայ գաղութը արդէն սկսած է ձեռնարկել հանգանակութեան։

Հանգանակուած դրամները պէտք է զրկել ուղղակի Պատրիարքարան։ Զրկուած գումարներու քանակութիւնը և երկրին անունը երկտողով մը գրել խմբագրութեանս, ի հրատարակութիւն։

Խմբգ. «Միութիւն»ի

ՈՎ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Վառնա հրատարակող անկողմնակալ (!) «Իրաւունք» թերթին 1898 թիւ 54 և 55ի էջերուն մէջ «Պապը Ալիի ցոյցին առթիւ» վերնագրով և եռաստղ ստորագրութեամբ յօդուած մը կար, որ Միութեան մէջ իմ գրած մէկ քանի տողերուն պատասխան էր։ Այդ յօդուածին պատասխանը գրելով յըղեցի «Իրաւունք» թերթին, ըստ օրինի հրատարակելու համար։ Սակայն «Իրաւունք» պատասխանած էր որ իմ յօդուածը չը պիտի կրնայ հրատարակել, այդ խնդրի մասին երկար և շատ գրուած լինելուն համար։ «Իրաւունք»ի խմբագրութիւնը կը մտնայ որ խղճի և լրագրական օրէնք է, որ երկու թերթերու էջերը գրաւող յօդուածի մը դէմ, քննադատողը իրաւունք ունի պատասխանելու նոյն թերթին մէջ։ Երկրորդ, յուզուած խնդիրը լոկ անձնական հանգամանք չունէր, այլ նաև հանրային, և անոր լուսաբանուելովը հայ հասարակութիւնը կարող էր օգուտ քաղել և զգուշանալ ապագայ մեքենայութիւններէ։ Այս պարագան խմբագիրը ինքն ալ չէ կարող ուրանալ, և նոյն իսկ յօդուածագիր պարոնը կըսէ. «Եւ որովհետև խնդիրը իր «հանրային նշանակութիւնը» ունի, օգտակար է որ պատմական ճշդութեամբ և չը նախապաշարուած միտքով պարզենք այս տեղ ամէն ինչ որ կը վերաբերի Պապը Ալիի ցոյցին։»

Ա՛րդ, շատ տարօրինակ և հակասական է որ խմբագիր մը իր թերթին անունը «Իրաւունք» կը դնէ և չուզեր յարգել ուրիշին քացարձակ իրաւունքը. ինքզինքը անկողմնակալ կը հռչակէ և թող կուտայ որ միայն մէկ կողմի մարդկանց կարծիքները լսուի և ընթերցող հասարակութիւնը նախապաշարուած մնայ։ Ճշմարտութիւնը բացայայտ կերպով երևան հանելու համար ընթերցողը պէտք է երկու կողմէն ըսուածները իմանայ, դատէ և վճռէ։

Եթէ «Իրաւունք» համոզուած էր որ այդ խնդրի մասին շատ բան էր գրուած, ինչո՞ւ համար իր թերթի էջերուն մէջ հիւրընկալեց այդ երկար յօդուածը։ Եթէ՛ հիւրընկալեց, ինչո՞ւ համար չը հրատարակեց մեր պատասխանը։ Անշուշտ, եթէ խմբագրութեան նպատակը լինէր խնդիրը լուսաբանելու համար այդ յօդուածը հիւրընկալել, պարտաւոր էր մեր պատասխանն ալ հրատարակել։ Ուրեմն, պարզ կերևի որ «Իրաւունք»ի խմբագրութիւնը կուսակցական, կողմնակցական և խնամիական գծուծ և ստոր թելադրութիւններու կը հնտևի։ Եւ այս չը վայելեր խմբագրութեանը, որ կոչուած է ժողովուրդը առաջնորդելու և լուսաւորելու. իրենց կոչումը և պարտականութիւնը չը ճանչցող խմբագիրներ, լաւ կընեն որ հեռանան խմբագրական ասպարէզէն։ Որոշ կուսակցական թերթերու համար չէ խօսքս։

Դառնանք այժմ բուն խնդրին, այսինքն պատասխանելու այն նոյն յօդուածին, որ վերը յիշեցինք և որուն պատասխան չէր հրատարակուած «Իրաւունք»ի մէջ։ Միայն կը ցաւինք որ չէինք ընդօրինակած զայն, և կրկին գրելու նեղութիւնը պիտի կրենք, և թերևս մի քիչ տարբեր մեր առջի գրածէն։

* * *

Պ. Յօդուածագիրը կըսէ. «Աթէնքի «Միութիւն» թերթին մէջ ակէ առաջ պ. Թափառիկ յօդուած մը հրատարակած էր որով Պապը Ալիի ցոյցին պատասխանատուութիւնը կը ծանրացնէր միակ անձի մը ուսերուն վրայ։» Ուրիշ տեղ մը. «Սխալներ գործուեցան, տարակոյս չկայ, բայց այդ սխալները ազգովին (!) գործուեցան, հետևաբար այսօր ալ անոնց դարմանը ազգովին խորհելու ենք։ Անխղճութիւն և տգիտութիւն է ամէն պատասխանատուութիւն անհատներու վրայ բարդել։» Դարձեալ. «Ճշմարտութեան զգացումունեցող ամէն ընթերցող կրնայ ինքնին մակաբերել թէ, ինչ որ ալ եղած ըլլան ցոյցին հետևանքները։ պատասխանատուութիւնները շատ ու շատ կը բաժնուին և կը կրկնենք թէ պատմական աններելի սխալ մըն է միակ անձի մը վրայ ծանրացնել զայնս, թէև այդ անձը քննադատին անախորժ ըլլալու դժբաղդութեանն հանդիպած ըլլայ։»

Կը պատասխանենք. Պապը Ալիի ցոյցին անխորհուրդ կազմակերպութիւնը և ջարդերու սկզբնաւորութեան պատասխանատուութիւնը կը ծանրանայ մի միայն Արփիարի և իրեն գործակից մէկ երկու անձերու վրայ։ Պատճառը պարզ է. պ. Յօդուածագիրը չէ կարող ուրանալ որ (էթէ ուրանայ իսկ, մենք ապացոյցներով և վկաներով կարող ենք հաստատել) Պապը Ալիի ցոյցը Պոլսոյ Վարչութեան որոշմամբ խաղաղասիրական, այսինքն առանց զէնքի պիտի լինէր։ Ո՞վ մտցուց զէնքը։ Նաղարբէ՞կը թէ Արփիար։ Ահա այստեղ է բուն խնդիրը, և մենք փաստերով համոզուած ենք որ զէնքը մտցնելու պատասխանատուութիւնը կը ծանրանայ Արփիարի և Օհանջանեանի վրայ. որովհետև եթէ Նաղարբէկ հրամայած լինէր, անշուշտ այդ մասին տեղեկութիւն պիտի ունենային նաև Պոլսոյ խորհուրդին մասնակցող ուրիշ անձեր։ Մինչդեռ ցոյցի խորհուրդին մասնակցող երկու վստահելի անձեր, ցոյցէն յետոյ զարմանք կը յայտնէին թէ ինչպէս զէնքեր բաժնուած են ժողովուրդին և իրենք բնաւ տեղեկութիւն չունին այդ մասին։ Պէտք է յայտնել այստեղ, որ այդ պարոնները ցոյցէն երկու օր առաջ խորհրդակցութեան մասնակցած են և մինչև այդ պահուն ցոյցին խաղաղասիրական լինելուն վրայ խօսուած է։

Պահ մը ընդունինք թէ պատասխանատուն Նաղարբէկն եղած լինի, ինչպէս որ կուզէ պ. Յօդուածագիրը, իր հետևեալ ակնարկութիւններով։ Իսկ ընդհանրական նշանակութիւն ունեցող ամէն խնդրի համար կը գիմէին (Պոլսոյ Վարչութիւնը) կեդրոնի հրահանգին և զինուորական կարգապահութեամբ կը հպատակէին կեդրոնէն բղխած պատուէրներուն։» Ուրիշ տեղ մը. «Տարբեր խնդիր է որ Նաղարբէկեան փառամոլութիւնը ի վերջոյ այդ ցոյցին տուաւ կուսակցական նեղ հանգամանք։» Զը գիտեմ արդե՞օք պ. յօդուածագիրը վերջին տողով զէնքը ակնարկել կը փափաքի. եթէ այդպէս է, ինչո՞ւ համար Ա. Զօպանեանին նման բացարձակ չը յայտներ, որ քիչ յետոյ պիտի տեսնենք։

Արդե՞օք չը հակասեր իր ազգովին սխալած խօսքին և մանաւանդ հետևեալ գրածներուն. «Պոլսոյ Վարչութիւնը յաճախ կը թելադրուէր հանրային կարծիքէն, և այլն։» Եւ եթէ իր այս խօսքերով չուզեր հակասել, արդեօք հաստատած չը՞ լինիր պատասխանատուութիւնը միակ անձի մը ուսերուն վրայ ծանրացնելու ճշմարտութիւնը. իր խօսքով տարբերութիւնը միայն անուններու վրայ է, ո՛չ թէ եղելութեան։ Թո՛ղ ընթերցողը դատէ։

Պ. Արշակ Զօպանեան «Անահիտի» 3 թիւին մէջ կը գրէ. «Նաղարբէկ Պոլիս հրաման զրկած է որ ցոյցը կատարեն և զէնքով։» Պ. Յօդուածագիրը իր այս համախոհ պարոնին գրածներուն ի՞նչ կը պատասխանէ, արդեօք պիտի կրնա՞յ ըսել դարձեալ. «Անխղճութիւն և տգիտութիւն է ամէն պատասխանատուութիւն անհատներու վրայ բարդել։» Նոյն խօսքերը արդեօք պիտի կրնէ՞ դարձեալ

պ. Ա. Զօպանեանի հետեւեալ գրածներուն համար ալ «... Ժողովրդին ծոցէն ելած այդ դիւցազնական ուժը որ կը ցուցնէ թէ Հայը իր գոյութեան հարցը լուծելու համար հարկաւոր թաքուն կորիզն ունէր, աւելի կը ծանրացնէ վարիչներուն ոճիրը, քանի որ գէշ գործածեցին այդ ուժը եւ փճացուցին զայն...:» Անշուշտ, պ. Ցօղուածագըրին ինծ ուղղած խօսքերը, պատշաճօրէն կը պատկանին նաեւ պ. Զօպանեանին. թո՛ղ պ. Զօպանեան պատասխանէ իր սիրելի ընկեր-աշխատակցին. մենք կը շարունակենք մերինը։

Զէնքի խնդրի մասին պ. Զօպանեան այսպէս կը գրէ. «Ինծի ըսուած է թէ ցոյցին Պոլսեցի կազմակերպիչները որոշած էին անգէն պատգամաւորութիւն մը ղրկել Բ. Դուռը, բայց Նազարբէկի կողմէն ղրկուած անձերը (անձը պիտի լինի, Օհանջանեան) պնդեցին որ պէտք էր զինեալ ըլլար ցոյցը, "որպէս զի ընդհարում յառաջ գար եւ արիւն թափէր"։»

Շատ ճիշդ է ըսուածը, սակայն պէտք է գիտնալ որ ղրկուած անձեր չկային, այլ անձ մը Օհանջանեան, որը ղրկուած չէր Պոլիս, այլ Վան, որ իր ընկերներով միասին ձերբակալուելով Պոլիս բերուեցաւ եւ հրաշքով... (!) ազատեցաւ բանտէն, իր ընկերները անխղճաբար հոն ձգելով: Այո՛, որոշած էին անգէն պատգամաւորութիւն մը, սակայն յետոյ Արփիարի շնորհիւ զէնքով եղաւ, կոմիտէին դաւաճան անդամներուն խորհուրդով, եւ խղճամիտ անդամներուն բացակայութեանը։

Պ. Ցօղուածագիրը միամիտ ձեւանալով հայ ժողովուրդը կուզէ խաբել իր հետեւեալ խօսքերով, որ ամբողջութեամբ մէջ կը բերենք: «Այս անգամ ժողովին կը մասնակցին նաեւ Կեդրոնի ընդհ. ներկայացուցիչ պ. Օ. (պ. Զօպանեանի՝ ղրկուած անձերը) եւ ուրիշ կարգ մը գործիչներ (որոնց երկուքը վկաներս են զէնքի խնդիրը պարզելու համար)։ Եօթը խմբապետներէ բաղկացեալ Գործադիր Մարմինն ալ իր կարգին նիստ կը գումարէ, ու կրկին ժողովները կը համաձայնին ամէն կէտի վրայ, (Զէնքի որոշումն ալ այդ ժողովին մէջ եղա՞ւ արդեօք. բան մը չըսեր պ. Ցօղուածագիրը)։ Ցոյցին հանրային հանգամանք տալու համար (ոչ-յեղափոխական ըսել կուզէ) կորոշուի կնիք չի դնել Սատրագածին ներկայացուելիք բողոքագրին եւ Դեսպաններուն յղուելիք նամակներուն վրայ։ Մնացածը յայտնի է։ Ահա՛ գործին բուն պատմութիւնը։»

Մնացածը յայտնի է ըսելով վերջացուց․․․։ Մինչդեռ ճիշդ այդ յայտնի է ըսուածին տակ կը գտնուին բուն թաքուն խրդուղթիւնները եւ գեղծումները։ Կնիք չը դնել կորոշուի խօսքէն վերջը մնացածը յայտնի է խօսքով մարդուս մտքին մէջ իրաւացի կասկածներ կը ծնին, որովհետեւ այդ խօսքերու հետ կարելի չէ հաշտեցնել զէնքի խնդիրը։ Եթէ որոշուած էր այդ ատենին նախապէս ըլլալ եւ ցոյցին ժողովրդական հանգամանք մը տալ, ինչպէս եղաւ որ բողոքագրին կնիք չը դնել ուզող խելացիները, կարող եղան զէնքեր դնել հասարակութեան ձեռքը․․․։ Արդեօ՞ք, կնիքը աւելի ծանր զէնք մը նկատեցին քան այն չը պարպուած միօրինակ ըէվօլվէրները. եթէ այսպէս է, մենք այս տրամաբանութեան ըսելիք չունինք։

Եթէ զէնք որոշել հարկ ըլլար այդ ժողովին մէջ պէտք է որոշուէր. մինչդեռ պ. Ցօղուածագիրը այդ ժողովէն յետոյ ուրիշ ժողով գումարուած լինելու մասին բան մը չը յայտներ, այլ նոյն ժողովով ամէն բան կը վերջացնէ՝ «Կը համաձայնին ամէն կէտի վրայ» ըսելով, եւ խօսքը կը փակէ, կամ աւելի ճիշդ արտայայտութիւն, կարճ կը կապէ մնացածը յայտնի է դիւթական խօսքով։

Ուրեմն, իր խօսքերէն գատելով այդ ժողովին մէջ բնաւ զէնքի որոշում չէ եղած, եւ այդ ժողովէն յետոյ ուրիշ ժողով չէ գումարուած։ Լա՛ւ։ Հիմա կը հարցնեմ, ո՞վ մտցուց զէնքերը, ո՞վ հրամայեց։ Եթէ Նազարբէկը ըսուի, պ. Ցօղուածագրին խօսքով հակասական է, որովհետեւ Նազարբէկ եթէ առաջարկած իսկ լինէր, ժողովէն չէր ընդունուած կը նշանակէ, քանի որ վերջին այդ ժողովին մէջ որոշուած էր կնիք չը դնել։ Եթէ ղրկուող անձերը, այսինքն Կեդրոնի ընդհ. Ներկայացուցիչ Օհանջանեան մատնանիշ ըլլուի, դարձեալ մեր ըսածը կը հաստատուի. նոյնպէս պ. Զօպանեանի պնդեցին որ, եւ այլն խօսքը։ Վերջապէս մաթեմաթիքական ճշդութեամբ կը հաստատուի թէ՝ զէնքը Կեդրոնին որոշումէն անկախ կիրարկուած ծրագրի մէջ մտցուած է, թէ այդ գործը կատարած են Պոլսոյ Վարչութեան անդամներէն ոմանք, թէ այդ դաւաճան անդամներն են Արփիար, Օհանջանեան եւ թերեւս ուրիշներ, եւ թէ ասոնք վերջին ժողովէն յետոյ անպատճառ ուրիշ սահմանափակ ժողով մըն ալ ունեցած են, անձնուէր եւ ուղղամիտ անդամները չը հրաւիրելով (թերեւս պ. Ցօղուածագիրը, որ այն ատեն նոյն Վարչութեան անդամ լինելը կը յայտնէ, ինքն ալ ղրկուած լինի այդ ժողովէն և այդ պատճառաւ միամտօրէն պաշտպանէ դաւաճանները) եւ այդ տեղ խորհած են զէնքերը բաժնելու չարաշնորհ միջոցները եւ կերպերը (անշուշտ ոստիկանութեան նախարարին, իրենց խիստ մտերիմ բարեկամ Նազըմ փաշայի թելադրութեամբ)։

Ուրեմն իրաւունք ունէինք Պապը Ալիի ցոյցին հետեւանքներուն պատասխանատուութիւնը ծանրացնել անհատներու ուսին վրայ, եւ ոչ թէ պ. Ցօղուածագրին ըսածին պէս, հայ հասարակութեան ուսին վրայ։ Հայ ժողովուրդին զգացումը, եռանդը, տրամադրութիւնը կիրառ չունին այս խնդրի մէջ, այս մասին քիչ վարը կը խօսինք։

(Շարունակելի)

ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՍ ՑՈՒՑԱԿԻՆ

Աստուրի պէս անցան այն երջանիկ օրերը՝ երբ Փոքր Հայքի քաղաքներէն մէկուն գիւղերը դասատուութեան պաշտօն ստանձնած էի։ Որչա՜փ քաղցր էին ինծ համար այդ վաղանցուկ օրերը, աւա՜ղ որ խիստ շուտ անցան. եւ որոնց յիշատակը անջնջելի հետքեր միայն թողուցին սրտիս խորերը, խաբուսիկ երազի մը պէս։

Այդ օրերը Հայ-Ազգը նոր սկսած

ԼՐՏԵՍ — ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

ՀԱՑԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԻՆԸ ՏԵՍԱՐԱՆՈՎ

Դիտեց եւ Գրեց

ՃՇՄԱՐՏԱԽՕՍԵԱՆ

(Շար. 27րդ թուէն)

Գ. Զ. — Սակայն թո՛ղ գաղտնի տեղ մը գումարուելով խորհրդակցին. մանաւանդ ի՞նչ հարկ կար մեզ իրենց գաղտնիքին տեղեակ ընել. մենք որ ո՛չ անդամ ենք, ո՛չ յեղափոխական։

Վ. — Եղբա՛յր, ի՞նչ կը փնտռես. ինծի համար բոլորն ալ շահախնդիր մարդիկներ են, մեր գիտցածները չե՞ն մի. ասոնք կոմիտէի անդամ ըլլալով ա՞զգը պիտի փրկեն...։ Քաֆէ Սըլանիքի մէջ ժողով գումարողներէ ի՞նչ բարիք յուսալու է։

Գ. Զ. — Շիտակը ես իմ յոյսս բոլորովին կտրած եմ, առանց անխորհուրդ եւ կասկածելի յեղափոխականներէ բարիք աւելի չարիք կը յուսամ։

Վ. — Զարմանալի է որ մէջերնին այնքան ազնիւ, անձնուէր եւ հերոս անձեր կան, ու գործին ղեկավարութիւնը առանց ապիկար եւ կասկածելի մարդկանց յանձներ են. խօսքը մէջերնիս, սա Արփիարը, սա Բէլէկեանը մեր գիտցածները չե՞ն մի։

Գ. Զ. — Աստուած վերջերնիս բարին ընէ։ (Իր տանը դուռը զարնելով) Մնաս բարով, գիշեր բարի։

Վ. — Գիշեր բարի։

(Գ. Զ. տուն կը մտնէ, Վ. փողոցէն կը հեռանայ եւ վարագոյրը կիջնէ)։

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

(Տեսարանը տեղի կունենայ ոստիկանատան սենեակներէն մէկուն մէջ։ Նազըմ փաշա եւ Հիւսնի պէյ դէմ առ դէմ նստած են)։

Նազըմ փաշա — Հնչակեանները ցոյցը որոշեր են, մեր լրտեսներուն բերած լուրը մանրամասնութեամբ Արփիարէն կիմանանք այսօր։

Հիւսնի պէյ — Արփիար ինծ խոստացաւ ցոյցը մեր ծրագրին համեմատ կարգադրել. շատ պէս հաւատարիմ է մեզ։

Նազըմ փաշա — Մէկ Արփիարը մեր հարիւր լրտեսին գործը կը տեսնէ. այսքան հաւատարմութիւն չէի յուսար։

Հիւսնի պէյ — Բայց հայերը սկսած են անկէ կասկածիլ. կը վախնամ որ մաղը ծակի եւ մեր ծրագիրները թերեւ ելնեն, գործը գլուխ հանելու համար մէկ հատիկ յարմար անձն է, մեր հայ լրտեսները չէին կրնար կոմիտէի գաղտնիքները իմանալ, լրտես մը կոմիտէի անդա՜մ.., շիտակը մեծ յաջողութիւն է։

Նազըմ փաշա — Հայերը ես շատ կը ճանչնամ, մէկին ատածը միւսը կը պաշտէ, մանաւանդ Արփիարի ճարպիկութիւնը բնաւ կասկածի տեղի չը տար, ատողներէ աւելի համակրողներ ունի, մանաւանդ վտանգաւորներուն մէջ, մեր ուզածն ալ այդ է։

Հիւսնի պէյ — Վերջերս մեզմէ մի քիչ նեղացեր էր։

Նազըմ փաշա — Ինչո՞ւ։

Հիւսնի պէյ — Կուզէր որ զինքը չարախօսող Մելքոն Կիւրճեանը բանտարկել տամ, ես այդ չըրի։

Նազըմ փաշա — Բայց այդ անկարելի էր, ես աւելի լաւ համարեցի խնդրոյն տեղեակ չը ձեւանալ. որովհետեւ զայն բանտարկելովնիս, Արփիարին պաշտպանած լինելնիս պիտի յայտնուէր, քանի որ խնդիրը Արփիարի անունին շուրջը կը դառնար եւ ըստ օրինի ինքն ալ բանտարկուելու էր։

Հիւսնի պէյ — «Հայրենիք» թերթի մէջ խնդիրը պարզելու թոյլտուութիւնը ինչո՞ւ տուիք, քանի որ մեր պաշտպանութեան մասին կասկածի տեղի տալ չէինք ուզեր։

Նազըմ փաշա — Ես համակարծիք չէի, բայց ինքը առարկեց որ հայերուն մէջ իր վարկը չէ կարող պահել եւ վստահութիւն ներշնչել, հայերը Մելքոնի խօսքերուն վրայ իրաւունք ունէին Արփիարէն կասկածելու եւ այն ատեն մեր խորհուրդները ջուրը կիյնային։ Եւ արդէն Մելքոնի ըսածները հայերուն մէջ տարածուէր էր, մերինները ամէն կողմէ լուրը բերին։

Հիւսնի պէյ — Սակայն այդ խնդիրը ապատօրէն լրագրական ասպարէզը հանելը ինքնին պաշտպանութիւն կը հոտէր. գրաքննիչ պաշտօնեան ալ իմացաւ որ Արփիար մեր լրտեսն է, վասն զի մինչեւ որ մեր պաշտօնաթուղթը չստացաւ, հրատարակութիւնը չարտօնեց։

Նազըմ փաշա — Ուրիշ կերպ ալ կարելի չէր. մեր մասնաւոր հրամանը եթէ չը լինէր, առանց ժամանակ մը ատանկ յօդուած մը չէր տպուէր։

Հիւսնի պէյ — Ճիշդ այդ պատճառաւ գիտողութիւն ըրի, որովհետեւ ստանալով հայեր այդ յօդուածին հրատարակութեան գաղտնիքը պիտի զգային, նմանը չը տեսնուած թոյլտուութիւն մըն էր։

Նազըմ փաշա — Ցարդ ձեր կասկածը իրականացնող լուրեր չը հաղորդուեցաւ մերիններէն. ուրեմն հայերը միղայագիրին նման այդ յօդուածն ալ մարսեցին։

(Այս միջոցին դռնապան ոստիկանը ներս կը մտնէ եւ թէմէլլահ մը ընելով կըսէ)։

Ոստիկանը — Արփիար էֆէնտին եկած է, փաշա էֆէնտին տեսնել կուզէ։

Նազըմ փաշա — (Ուրախութեան ժպիտով մը կը հրամայէ ոստիկանին) թո՛ղ ներս հրամէ։

(Արփիար խոյլիկ ձեւերով եւ քըծնող շարժումներով ներս կը մտնէ, Ճգրական թեմէլլաններ շարունակելով կը կանգնի)։

Նազըմ փաշա — (Ժպտելով Արփիարի ձեռքը սեղմելով) հրամեցէ՛ք, նստեցէ՛ք։

(Արփիար նոր թէմէլլահով մը կը նստի)։

Նազըմ փաշա — Բարի եկաք, ի՞նչպէս էք։

Արփիար — Շնորհակալ եմ, ձեր թանկագին կենաց բարեմաղթող եմ։

Հիւսնի պէյ — (Արփիարին) ի՞նչպէս էք։

Նազըմ փաշա — Է՛հ տեսնենք ի՞նչ լուր։

Արփիար — Ողջութիւննիդ, ցոյցը որոշեցին։

Նազըմ փաշա — Արդէն լուր ունիմ. ե՞րբ պիտի լինի, օրը եւ ժամը, ո՞ւրտեղ եւ ի՞նչ կերպով ըլլալը կուզեմ իմանալ։

Արփիար — Կարգադրութեանց մասին այս գիշեր պիտի խորհինք, կը հաղորդեմ ձեր վսեմութեան։

Նազըմ փաշա — Շնորհակալ եմ։

Հիւսնի պէյ — Անշո՛ւշտ որոշած էք ի՞նչպիսի ցոյց լինելը։

Արփիար — Այո՛, Պապը Ալիի առջեւ։

Հիւսնի պէյ — (Զարմանօք) Պապը Ալի՞ի առջեւ...։

Արփիար — Այո՛, Սատրազամին մի աղերսագիր պիտի ներկայացուի, րէֆօրմներու գործադրութիւնը պահանջելով։

Նազըմ փաշա — Բայց ատիկա մեծ ցոյց մը չէ։

Արփիար — Սակայն մեծ բազմութիւն պիտի լինի, կըերներ ալ պիտի գտնուին։

(Նազըմ փաշա մի քիչ մտածելէ յետոյ խօսքը Հիւսնի պէյին կուղղէ)։

Նազըմ փաշա — Պապը Ալիի առջեւ տեղի ունենալիք ցոյցին նշանակութիւնը մեծ է. ես հաւնեցայ, միայն իմ խորհած կերպով կարգադրելու է։

էր սթափիլ իր հինգ դարեան երկաթէ թմրութենէն ու իր վրայ ծանրացած գերութեան շղթան խորտակելու աշխատիլ: Մենք ալ իբր այդ ազգի հարազատները՝ ուխտեցինք մեզ ինկած աշխատութիւնը չ'խնայել: Առաջին համախմբումնիս շատ փոքր եղած էր (հազիւ երեք հոգի) բայց շուտ ստուարացաւ: Մեր կողմէն անընդհատ մարդ կը ղրկէինք քաղաքի կազմակերպութեան թերթ. լուր բերելու, անբացատրելի էր մեր զգացած ուրախութիւնը երբ Եւրոպիոյ մէկ անկիւնը մէկ ամիս առաջ լոյս տեսած թերթ մը ձեռք կանցնէինք, որովհետեւ անոր մէջ ազատօրէն մեր կեանքի ժամանակակից վիճակը պատկերացած կը գտնէինք: Գիւղերու կեդրոնը համարուած հայաբնակ դաշտ գիւղացի Տաճատն և Սմբատը ամենէն անկեղծ և ճշմարիտ հայրենասիրի տիպարներ էին, ստէպ իրար կը գտնէինք իւրաքանչիւրս մեր ունեցած գործունէութեան հաշիւը մէջ տեղ դնելու համար: Տաճատը երկայնահասակ, արծըռունգն, ընչաքը հազիւ մրոտած, գեղադէմ երիտասարդ մ'էր ժպիտը միշտ կը թրթռար անոր դէմքին վրայ իր գիւղացիի համեստ կերպարանքին տակ ուսեալ ու զարգացած սիրտ մը կը կրէր, հեզ գառնուկ մ'էր իր սիրելի ընկերներու շրջանակին մէջ. իսկ կարգապահ զինուոր մը իր պարտականութեանց հանդէպ, պարկեշտ ու ազնիւ, նորա չինականի շալվարը՝ անծոպ ֆէսը տեսնողին վրայ տգէտի մը տպաւորութիւնը կը թողէին սակայն իր խելացի ու խոհեմ գործունէութիւնը զինքը ակնածելի ըրած էին շրջակայ հայ և թուրք բնակչաց. քանիցս մօտակայ մէբքէգին մէջ պաշտօն առաջարկուած էր իրեն, բայց միթէ՞ կրնար Տաճատի նման վեհ հոգի մը պաշտօն ստանձնել այնպիսի տեղ մը ուր միշտ հայ գիւղացին բիրտօրէն կը կեղեքուի: Այժմ նա մեր շրջանակի մէջ իրեն բոլոր ջանքերը նուիրած էր իր սիրած ու պաշտած հայ գիւղացիներու վերածնութեան գործին, դուլ ու դադար չունէր, իր միակ բաղձանքը ազգայնութեան ոգին արթնցնել և հայ գիւղացին ինքնաճանաչութեան Րոգորելն էր:

Գալով Սմբատին՝ սա երկայնահասակ, առողջ կազմուածքով քաջարի երիտասարդ մ'էր, հազիւ 33 գարուններ ողջունած, թէև հազիւ գեղջկական դաստիարակութիւն մը ընդունած՝բայց կատարեալ հայրենասէր մ'էր. Մուսա-Բէկի գազանութիւնները և անիրաւ դատավարութիւնը Սմբատը արթնցուցած էին, նա թէև Ղալաթիա բեռնակիր եղած էր սակայն «Հայաստան»ի և «Արմէնիա»ի ընթերցումով շատ բան սորված էր, անոր վեհ սրտին մէջ երբեք բոյն չէր դրած կեղծ հայրենասիրութիւնը և Պղատոնական կարեկցութիւնը, նա գործնականապէս աշխատող մ'էր իր ուժին ներածին չափ տարածել յեղափոխական կենսաւէտ գաղափարը: Հնչակեան ծրագիրը նոր սկսած էր սփռուիլ Հայաստանի մէջ, Սմբատը Պոլսէն հայրենիք դարձաւ, անոր գիւղ ժամանած օրը Տաճատը ինձ կաւետէր, անկեղծ ու գործունեայ ընկերոջ մը աւելնալը. երբեք չ'պիտի մոռնամ այն երջանիկ օրը երբ Սմբատը Տաճատի ընկերակցութեամբ վարժարան մտաւ. առաջին ակնարկով մենք իրարու սիրտ կարդացած էինք: Նա արդէն մեզ ընկերացած էր: Ուրախութիւննիս չափ չունէր, այլ և երեքս ձեռք ձեռքի տուած կաշխատէինք իրականացնել այն յոյսերը որ մեզ վրայ դրուած էին, շատ չանցած գրեթէ ամբողջ գիւղերը կազմակերպած և իրարու հաղորդակցութեան մէջ դրած էինք. մեր աղքատիկ գանձարանէն 120 ձեռքի չափ հագուստ 7-8 Մարթին 4-5 Գարատաղ գնած էինք, հրոսախմբերու համար:

Ամռան օրերէն մէկը որոշուած էր պզտիկ համախմբում մը ունենալ մօտակայ վանքը, եկաւ ցանկալի օրը 70-80ի չափ առոյգ երիտասարդներ ժամադրեալ ժամուն հոն հասած էին, հեռուէն դիտող մը ուխտաւոր պիտի կարծէր, բայց ի՜նչ ուխտաւոր բոլորն ալ զինուած. կարծես նախնի հայ դիւցազներու ոգիներն էին որոնք այլ ևս չ'կարենալով հանդուրժել իրենց պաշտելի հայրենեաց կոխան լինելուն և պղծուելուն վրէժ լուծելու ելած էին: Մօտակայ քաղաքէն ալ իր ներկայացուցիչն ունէր հոն ազնիւ երիտասարդ մը (Վահէն), մեր ուխտաւորները վանքէն 5 վայրկեան հեռու տափարակի մը մէջ խմբուեցան ուրտեղ Վահէն ու Տաճատը քաջալերական յորդորներ արտասանեցին այդ ազատութեան զինուորներուն, որուն յաջորդեց կէս ժամի չափ հրացանաձգութիւն և ապա բոլորակ պար մը հետեւեալ պարերգով:

Ծօ՛ պէտք է պէտք է պէտք է,
Սուր հրացան զէնք պէտք է.
Երբոր թշնամին ալ գայ,
Վրան յարձակիլ պէտք է:
Կուշտին մտնէ գեղարդը,
Փորուն թափի լեարդը.
Եօթն անգամ գետինն անցնի,
Ազգն ուրացող վատ մարդը:
Ծօ՛ պէտք է պէտք է և այլն:
Ով իր ազգը ուրանայ,
Երկու աչքը կուրանայ,
Ցետնեալ աղքատի նման,
Դռնէ ի դուռ մուրանայ:
Ծօ՛ պէտք է պէտք է և այլն:

Պարի միջոցին երիտասարդներէն մին զատուելով վանք դարձաւ վասն զի այդ վառ երիտասարդութիւնը հաւատարիմ նաև իր ազգային աւանդութեանց չէր մոռցած մօտակայ թուրք գիւղացիներու հօտէն երկու խոյ իբր մատաղ վերցունել, որն որ վանքի տնտեսը անոնց զբաղումի միջոցին եփած պատրաստած էր, վանք գացող երիտասարդը նորէն իր ընկերներուն դառնալով ծանոյց սեղանի պատրաստ լինելը, որով ամէնքը միասին դէպի վանք ուղղուեցան. տեսնելու էր թէ ինչպէս վանահօր սենեակը զօրանոցի մը փոխուած էր, պատերը ծածկուած էին տարբեր տեսակի զէնքերով, ազգային երգերն ու խանդավառութիւնը չափ ու սահման չունէր, վասնզի անկեղծ սրտերէ կը բղխէր. հոն մուտ գտած չէր, ո՛չ գազան թշնամւոյն երկիւղը ո՛չ ցածոգի մատնչի օձային սողոսկումը, ներկայ եղողները կամաւոր զինուորներ էին իրենց դարևոր ոտնակոխ եղած Հայրենեաց Ս. դատին, որոնք եկած էին հանդիսաւոր ուխտ ընել այդ լռիկ մենաստանի մէջ, իրենց նախահայրց շիրիմներու վրայ: Հացկերոյթէն վերջ Վահէն վերջին անգամ լինելով շատ զգածուած շեշտերով նկարագրեց իրենց պաշտելի հայրենեաց ներկայ թշուառ վիճակը և որուն բարուքումը երիտասարդութեան անձնուիրութե-

---

Հիւսնի պէյ — Ազկէ ի՞նչ օգուտ:

Նազըմ փաշա — Այդ մասին յետոյ կը խօսինք. (Արփիարի դառնալով) շատ զէնք ունի՞ք:

Արփիար — Ոչ, արդէն ցոյցը խաղաղասիրական պիտի ըլլայ:

Նազըմ փաշա — Խաղաղասիրական ի՞նչ ըսել է:

Արփիար — Այսինքն առանց զէնքի, որպէս զի ցոյցը բոլորովին ժողովուրդին վերագրուի և ոչ թէ յեղափոխականներուն:

Նազըմ փաշա — Չէ՛, չէ՛, այդ չըլլար: Իմ գործիս չի գար. պէտք է զէնք տալ ձեռքերնին, թո՛ղ վրանին զէնք ունենան, բայց չի գործածեն:

Արփիար — Բայց որոշուած է մի անգամ:

Նազըմ փաշա — Կարելի է փոխել որոշումը:

Արփիար — Բոլորը չեն համաձայնիր. արդէն ես առաջարկած էի, մեծամասնութիւնը մերժեց. նոր փաստ պէտք է:

(Նազըմ փաշա կը խորհի:)

Հիւսնի պէյ — (Արփիարին) վստահածներուդ հետ որոշէ և միւսներուն մի՛ իմացներ. Բէյէկը, Օհանջանը կը համաձայնին, հակառակ պարագայի ես անոնք կը համոզեմ:

Արփիար — Ձեր վեհմութեան խօսքը չեն կոտրեր:

Նազըմ փաշա — Մի անգամ առաջարկէ. եթէ չի համաձայնին, ցոյցէն մէկ օր առաջ մի քանի համախոհներու միջոցաւ զէնքերը կը բաժնես, թո՛ղ ընկերներդ չ'գիտնան, զէնքերն ալ ես կուտամ քեզ:

Արփիար — (վրդոված) Բայց առելորդ արիւնայեղութիւն կը լինի:

Նազըմ փաշա — Շատ մեծ բան չի լինիր, պատուիրել տուէք որ զէնք չի պարպեն, միայն թո՛ղ վրանին գտնուի, այսչափ:

Հիւսնի պէյ — Յեղափոխականի ձեռքը զէնք տալ և պահանջել որ հանդարտ կենայ, այդ անկարելի է, երկու կողմէ ի զուր արիւն կը հոսէ. ես ձեր միտքը չի հասկցայ փաշա:

Նազըմ փաշա — (ճիւաղային ծիծաղով մը) Բէյի հետ վերջը կը կըռուինք. թո՛ղ միտքս Արփիարին հասկցնեմ, քեզ հասցնելը վերջի խնդիր է: Որոշումս վճռական է, պէտք է այդպէս լինի: (Արփիարին դառնալով) քեզմէ կ'սպասեմ և կը յուսամ, աշխատէ՛ և լուրը շո՛ւտ բեր:

Արփիար — Գլխի՛ս վրայ: (Ոտքի կ'ելնէ:)

Նազըմ փաշա — (ոտքի ելնելով Արփիարի կռնակը կը ծեծէ և ուրախ ժպիտով կըսէ) քեզ համար Սուլթանէն նոր շնորհ մը պիտի խնդրեմ, իմ մնակ յոյսս քու վրադ է:

Արփիար — Շնորհակալ եմ, երախտագիտութիւնս չափ ու սահման չունի, տուած խոստմանս համաձայն վեհափառ Սուլթանին մ[illegible] հաւատարիմ պիտի մնամ:

Նազըմ փաշա — Կասկած չունիմ, շատ գոհ եմ:

(Արփիար կը մեկնի: Նազըմ փաշա ուրախութեամբ ձեռքերը իրար շփելով Հիւս պէյին կը մօտենայ:)

Նազըմ փաշա — Սքանչելի ծրագիր մը միտքս ինկաւ, այսօր Սուլթանին պիտի հաղորդեմ, շատ գոհ պիտի մնայ:

Հիւսնի պէյ — Սկիզբէն ի վեր ձեր միտքը չի կրցայ իմանալ, ի՞նչ տարօրինակ ծրագիր է այդ, որ մեր թշնամիներուն ձեռքը զէնք տեսնել կուզէք, և կը պահանջէք իսկ:

Նազըմ փաշա — Մեր բուն յաջողութիւնը ճիշդ այդ զէնքին մէջ է. Արփիարին մօտ չուզեցի բացատրել միտքս. հիմա կը յայտնեմ և անմիջապէս Պալատ կերթամ Սուլթանին հաղորդելու: (Զանգակը կը հնչեցնէ, ոստիկան-դռնապահը ներս կը մտնէ): Կառքը պատրաստ լինի: (Ոստիկանը կը մեկնի): Հիմա ըսէք ինձ, խաղաղասիրական ցոյցէն ի՞նչ օգուտ կըսպասէք:

Հիւսնի պէյ — Մի անգամէն բոլոր յեղափոխականները կը ձերբակալենք և հնչակեան կազմակերպութիւնը կը ջնջենք:

Նազըմ փաշա — (խնդալով) Հա՛, հա՛, հա՛, նախ օգուտը շատ ոչինչ է իմ ծրագրիս բաղդատմամբ. երկրորդ մենք չենք կարող անոնց յեղափոխական ըլլալնին հաստատել. իբր հայ հասարակութիւն աղերսագրով մը իրենց ցաւը յայտնած պիտի լինին և շնորհ պիտի խնդրեն, ուրիշ ոչինչ:

Հիւսնի պէյ — Բազմութեամբ Պապը Ալին կոխելնին ինքնին յեղափոխական շարժում մ'է. զանոնք ձերբակալելու համար այդ բաւական է:

Նազըմ փաշա — Այո՛ սակայն զանոնք երկար պահելու և յեղափոխան ամբաստանելու համար ձեռքերնիս մեծ փաստ մը չենք ունենար, հետեւաբար Պատրիարքին և Դեսպաններուն միջամտութեամբ պիտի ստիպուինք ազատ արձակել:

Հիւսնի պէյ — Ճշմարիտ է ձեր ըսածը. սակայն ըսէք խնդրեմ, ձեր ծրագրէն ի՞նչ մեծ շահ կայ:

Նազըմ փաշա — Երկու խօսքով բացատրեմ. երբ այդպիսի մեծ բազմութեան մը վրայ զէնքեր գըտնուին և մարդիկ վիրաւորուին, ձեռքերնիս հաստատուն փաստ մը կունենանք զանոնք յեղափոխական նկատելու: Այնպէս չէ՞:

Հիւսնի պէյ — Շատ ճիշդ է, լաւ կը խորհիք:

Նազըմ փաշա — Եթէ օգուտը միայն այդ լինէր, դարձեալ մեծ բան մը չէր. աւելին կայ, կարող ենք զանոնք ջարդել ու կոտորել, և ո՛չ միայն ցոյցին մասնակցողներն, այլ և իրենց սովորական գործով զբաղող անտեղեակ հայերն:

Հիւսնի պէյ — Ձեր ծրագիրն արդարև սքանչելի է սակայն մի բան ինձ մտածել կուտայ:

Նազըմ փաշա — Ի՞նչ:

Հիւսնի պէյ — Եւրոպացիք մեզ անիրաւ կը հանեն ճիշտ Սասնոյ խնդիրին նման:

Նազըմ փաշա — Ես այդ կէտն ալ մտածած եմ. զինուորներու և ոստիկաններու միջոցաւ չենք գործադրեր, այլ հասարակ ժողովուրդին միջոցաւ. քիւրտերը, լազերը և չերքէզները եթէ մի քիչ թոյլտուութիւն ստանան, կրկնապատիկը կը կատարեն, և եթէ Եւրոպացիք դիտողութիւն ընեն, իրենց կը պատասխանենք — ի՞նչ ընենք, հայերը պատճառ և նախայարձակ եղան, միւսիւլման ժողովուրդը գրգռեցին, մենք մեր ձեռքէն եկածին չափ աշխատեցանք ժողովուրդին յուզումը զսպելու, և այլն:

Հիւսնի պէյ — Այդ ալ լա՛ւ. սակայն իսլամ ժողովուրդին ի՞նչպէս յայտնելու է, որ մեր կողմէն գըրգռուած լինելնին չի յայտնուի, և Եւրոպացիք չի գիտնան:

Նազըմ փաշա — Թո՛ղ գիտնան, պաշտօնապէս չեն կարող հաստատել, հեռուէն կը հաչեն ու կը լռեն:

Հիւսնի պէյ — Ուրեմն մասնաւոր պատրաստութիւն պէտք է:

Նազըմ փաշա — Անշո՛ւշտ, շատ մեծ պատրաստութիւն և զգուշութիւն հարկաւոր է, ամէն բան նախապէս կարգադրենք, ցոյցէն մի օր առաջ ժողովուրդը կը պատրաստենք:

Հիւսնի պէյ — Նաև կարող ենք մեր ոստիկաններուն և զինուորներուն պաշիպօզուքի հագուստներ հագցնել և իբր ժողովուրդ խառնել իսլամ ամբոխին մէջ, որպէս զի շուներուն գլուխը լաւ մը ճզմեն:

Նազըմ փաշա — Այդ շատ լաւ խորհեցաք:

(Շարունակելի)

նէն կախում ունենալը «հոգ չէ՝ կսէր նա, թէև մենք գուցէ շատերս չ'տեսած պիտի իյնանք թշնամւոյն տապարին տակ, սակայն մեր արիւններէն բիւրաւորներ կենդանութիւն պիտ առնեն...» Ամէնքը հաւաքուած էին վանքին մէջտեղը, վերջին «մընացես բարեաւ»ը պատերազմի գնացող զինուորներու հրաժեշտի տպաւորութիւն կը թողուր, վերջին անգամ մէկզմէկ ողջագուրելով խմբակներու բաժնուեցան և իւրաքանչիւրը իրենց գիւղերը դարձան։

(Շարունակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Դաշնակցական գործիչ մը և ուրիշ մը՝ 1894 թուականին ձերբակալուելով մինչև այսօր կը մնան կարնոյ բանտին մէջ և չարաչար կը տանջուին եղեր։ Քանիցս արտասահման իրենց ընկերներու և բարեկամներու նամակներ գրելով նիւթական օգնութիւն խնդրեր են, Պուրկարի իրենց բարեկամներէն Թաթէոս Գրիգորեան 200 ֆրանք հանգանակելով զրկած և պատասխանն ստացած ըլլալով կը խնդրէ ծանուցանել որ Դաշնակցականք և ուրիշ հայրենասէր ազգայինք եթէ կուզին այդ խեղճերուն նիւթական օժանդակութիւն մը բնել, թող հաճին դրամները ուղղակի իւր հասցէին զրկել, ինք կարող է զրկուած դրամները ապահովապէս հասցնել անոնց։ Հասցէ՝

Tatéos Krikorian Café Mouch
Bourgas (Bulgarie

— Գանտիաէն կը գրեն մեզ թէ՝ տեղւոյն հայոց Եկեղեցին՝ զոր կոտորածի ժամանակ թուրք խուժանը կէս աւերակ դանձուցած էր, վերանորոգելու համար մեծ ջանքեր կրնէ Արժ. Տէր Մանուէլ քհնյ. Տէր Անդրէասեան՝ գիմումներ ընելով Եօրկիոս իշխանին և Եւրոպայի ծովակալներուն, կը յուսացուի որ Արժ. Հայրը դրամական նպաստ մը ձեռք բերելով պիտի յաջողի ի մօտոյ Եկեղեցւոյն վերաշինութեան ձեռնարկել։

— Վիեննայէն կը հեռագրեն թէ՝ թուրք կառավարութիւնը ցամաքային սպառազինութենէն յետոյ կաշխատի ծովային ոյժն ալ զօրացնել։ Նաւատորմիղը կատարելագործելու համար բացի Աւստրիոյ գործարաններու ապրպրած թնդանօթներէն՝ թորբիլակիր շոգենաւի մը պատրաստութիւնը յանձնարարած է յԱնգլիա։

— Ցունական մամուլը Եւրոպայի թերթերէն քաղելով կը հրատարակէ թէ՝ հայկական հարցը շուտով պիտի ստանայ իւր արժանաւոր լուծումը Մակեդոնական խնդրոյ հետ։

— Թուրք և պուլկարական սահմանագլխի վրայ առաջին ընդհարումը տեղի ունեցաւ պուլկար յեղափոխականներու և թուրք զօրքերու միջև։ Բ. Դուռը պատերազմի տեղի չտալու համար զգուշական միջոցներ ձեռք առած է։ Վերջերս մեծ Պետութեանց զեկուցագրեր տալով խստիւ կը բողոքէ պուլկար գոմիթէներու ընթացքին դէմ։ Այս առթիւ Սոֆիայի մէջ յեղափոխականները ընդհ. ժողով գումարելով կառավարութեան գործակցութիւնը խնդրած են։

— Հայ յեղափոխական Դաշնակցութիւնը՝ Կրետէի ազատութիւնը և Մակեդոնիոյ արդի կացութիւնը մէջ բերելով շրջաբերական յայտարարութիւն մը գաղղիերէն լեզուով խմբագրած ու զրկած է վեց մեծ Պետութեանց, ներկայացնելով հայերու անտանելի վիճակը, խնդրած է Հայկական Խնդրոյ վերջնական լուծում մը տալ։

— Ամերիկեան կառավարութիւնը Աթէնքի իւր Դեսպանատան միջոցաւ առաջարկեց Հելլէն կառավարութեան որ յայսմհետէ ոճրագործները յանձնուին երկուստեք։ Կառավարութիւնը ընդունեց առաջարկը, և առ այս ի մօտոյ բանակցութիւնք պիտի սկսին արտաքին գործոց նախարարութեան և Ամերիկեան Դեսպանատան միջև։

— Մակեդոնիոյ թուրք իշխանութիւններն՝ տեղւոյն հելլենահպատակ յոյն բնակիչներէն զինուորական ապօրինի տուրք պահանջելով շատերը անխնայ չարչարած ու բանտերը նետած են։ Կ. Պոլսոյ Հելլենական Դեսպան պ. Մաւրօգօրդատօ Բ. Դրան խիստ բողոքագիր մը տալով, վաթսար պաշտօնէից առավել ընթացքը քննադատած և անոնց պաշտօնանկութիւնը պահանջած է։

— Սելանիկի թուրք զօրաբանակէն եօթը զօրքեր փախչելով յունական սահմանը մտեր և Թափանա քաղաքի Իշխանութեանց դիմելով փափաք յայտներ են քրիստոնէութիւնն ընդունիլ և յոյն զօրաբանակին ծառայել, սակայն ըստ Աթէնքի կառավարութեան հրահանգին Լարիսա զրկուեր են, ուր թրքական հիւպատոս Զիա Պէյ տեղւոյն իշխանութենեն ասոնց յանձնուիլը պահանջերէ թէև, բայց մինչև ցարդ ո՛և է պատասխան տրուած չէ։

— Ժէօն թիւրքերէն՝ Ալի Շէմսէտտին, Ահմէտ Մուխթար և Ահմէտ Համտի՝ երեք երիտասարդներ, որոնց երկուքը կառավարական պաշտօնեաներ, իսկ երրորդը զինուորական դպրոցի աշակերտ Աթէնք գալով Եօրկիոս Թագաւորին դիմեցին յոյն զօրաբանակին մէջ հաստատուելու համար, սակայն Թագաւորը չ'ընդունելով 100 ֆր. նպաստ տուաւ իւր ճանապարհածախս։ Այն երիտասարդները Մարսէյլի ճամբով Լօնտոն մեկնեցան։

— Ֆրանսայի երեսփոխանական ժողովը 57 քուէի դէմ 391ով 10,000 ֆրանկի վարկ մը քուէարկեց Գանիայի մէջ գաղղիական նամակատուն մը հաստատելու համար։

— Միացեալ Նահանգներու Միսիսիպի և Օհիո գետերը յորդելով շատ մեծ վնասներ պատճառեր են, շատեր խեղդուած են, կամուրջներ տներ քանդուեր և բազմակի բոյսեր փճացեր են։ Ընդհ. վնասը 15 միլիոն տօլարի կը հասնի։

ԱԶԴ

Կը ծախուին վիմագրական երկու մեքենաներ, որոնք թէև գործածուած, բայց ընտիր և արագաշարժ, իւրաքանչիւրը կարժէ 250 ֆր։ Դիմել խմբագրութեանս հասցէին։

ԲԱՆԱՍԷՐ

ՀԱՆԴԷՍ ՀՆԱԽՕՍԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԷՆՁՈՒԱԲԱՆԱԿԱՆ և ԲՆՆԱԿԱՆ, որ պիտի հրատարակուի ի Պարիս յառաջիկայ Մարտ ամսոյ վերջը։ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՄԲ Կ. Ց. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ եւ աշխատակցութեամբ ազգային և օտար արեւելագիտաց։

Բացուած է բաժանորդագրութիւնը՝ Տարեկան չորս գրքի համար 20 ֆր. ամէն տեղ. իսկ իւրաքանչիւր գիրքն՝ առ նուազն 100 էջէ բաղկացեալ՝ կ'արժէ ֆրանք 6։

Դիմել իւր հետեւեալ հասցէին՝
Basmadjian — 112, Bd Rochechoart PARIS

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՑ

Ազգային, Գրական և Գեղարուեստական։ Հասցէն՝
Mr. A. Tchobanian 6 place de l'Odéon. PARIS

ԲԱԶՄԱՎԷՊ

ԲԱԶՄԱՎԷՊՆ՝ կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը։ Կը պարունակէ ուսումնական հին նորակազմ բառերու ստուգաբանութիւն, հետաքրքրական ազգային տեղեկութիւնք. նըմանապէս պատմական, ուսումնական, կենսագրական, բարոյական և իմաստասիրական և այլն յօդուածներ։

Հասցէն՝
RÉDACTION DE LA REVUE "BAZMAVEP,,
S.t Lazar VENISE (Italie)

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը։

Հայ – Գրական յօդուածներէն զատ՝ ճշդիւ տեղեկութիւն կը տրուի Հայ – գրականութեան, պատմութեան և այլն նկատմամբ ամէն ամիս ելած հրատարակութեանց վրայ։ Նոյնպէս քննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ տպուած կարևոր լրերու մէջ։ Հասցէն՝
A la Rédaction de la Revue „Handtesse", Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆ

Գունաւոր և մեծադիր. գինն է 2 ֆր. փոստի ծախքով։ Դիմել խմբագրութեանս կամ արտասահմանի մեր պ. պ. գործակատարներուն։ Զինանշան ունենալ փափաքողներս և «Միութիւն»ը հատը 10 սանթիմի ձեռքէ առնել ուզողները թող դիմեն՝ Ռումանիայէն և Սերպիայէն հետեւեալ հասցէին՝ Nanouk Krikorian. Kazarma Pompierilor. Constanta (Roumanie)
Ռուսչուք՝ Karnig Deukmedjian Roustchouk (Bulgarie)
Վառնա՝ M. Zarbhanelian Varna (Bulgarie)
Իսկ Ամերիկաբնակ ազգայինք դիմեն Mr. Dades Zakar a Serew et Co. Providence. U. S A.

Ս. ՍԱՊԱՀ ԴԻՒԼԵԱՆ

ԵՒՐՈՊԱՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏՈՑ

96 երես՝ բաղկացեալ կարդալու արժանի ընտիր գործ մ'է գինն է 1 ֆր. — Շուտով ի լոյս պիտի ընծայէ նաև ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ «ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏՈՑ» գրկոյկը դիմել հեղինակի հասցէին ի Ռուսչուք, և «Շարժում»ի խմբագրութեան ի Վառնա։

ՀԱՅԵԼԻ

Ազգային և Գաւեշտական Շաբաթահանդէս

Տարեկան բաժնեգինն է 12 ֆր. վեցամսեայ 6 ֆր. կանխիկ. Հասցէն՝
Diran Papazian Rue Dragoman, K Stepan Varna (Bulgarie)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԳԻՐՔ ԳԱՂ. ԵՒ ՀԱՅ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ Ի. Հ. ՍԻՄԷՈՆԷ ԵՐԵՄԵԱՆ

Աշխարհիկ լեզուով՝ ընդարձակ բացատրութիւններ կուտայ ընդհանուր գիտական և բժշկական իրաց և այլ կարևոր նիւթոց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք անպակաս են։ Այն գործոյն բաժանորդագրութիւնը, որ է 10 ֆրանք, կը տեւէ մինչև մարտ ամսոյն սկիզբն. յետոյ գինը 15 ֆրանքի կը բարձրանայ։ Մինչև ցարդ բաժանորդագրութիւնք հասած են 150ի։ Հասցէն՝
Direction de l'Imprimerie arménienne St. LAZAR VENISE

Պ. Գ. Տէօքմէճեան հրատարակած է հետեւեալ մեծադիր (21—27) լուսանկար պատկերներն որոնք ընտիր քարդոնի (33—39) վրայ փակցուած կը ծախուին հատ ֆր. 2,50ի՝ ամեն տեղի համար և փոստի ծախքով միասին։

Ազգային հաստատութիւններու եւ մեծաքանակ գնողներու համար զեղչ։

Վճարմունք կանխիկ։
1. Նշանակք Հայաստանեայց
2. Խրիմեան- Հայրիկ
3. Իզմիրլեան Պատրիարք
4. Ներսէս Պատրիարք
5. Բաֆֆի
6. Բամա Բաթիպայ
7. Գ. Արծրունի

Դիմել՝ K. Deukmédjian Roustchouk (Bulgarie)

ՆՈՒԱԳՆԵՐ

Ա. ԱՄՄԱՆԻ

Գինն է 10 կոպէկ։ Եւրոպայի համար — 25 — սանթիմ. դուռարով գնողներին 10 օրս զեղչ կը լինի։

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա. ԱՄՄԱՆԻ

I «ՀԱՅԴՈՒԿ» պօէման
II «ՎԱՀԷ» ժամանակակից վէպը

Երկուսի նիւթն էլ առնուած է Վասպուրականի վերջին դէպքերից և իւրաքանչիւրը բաղկացած է 32 երեսներից։

Դրանց տպագրութեան ծախքը հոգալ կամեցողները թո՛ղ բարեհաճին իրենց պայմանները գրել հեղինակին հետեւեալ հասցէին։
A ASMAN. Tauris — Perse Poste Restante.

«Միութիւն»ի երեք թիւերը ստանալէն յետոյ չի վերադարձնողները պէտք է իրենց բաժնեգինը զրկեն, հակառակ պարագային իրենց թերթը դադրեցնելով լրագրոյս միջոցաւ հին հաշիւնին պիտի պահանջուի խմբագրութեանս կողմանէ։

ԽՄԲԱԳ. «ՄԻՈՒԹԻՒՆ»ի
ԱԹԷՆՔ ՀԱՅԿ, ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ